«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման ՝ Ուսուցչի համագործակցումը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:

Առարկան ՝ Մաթեմատիկա

Հետազոտող ուսուցիչ ՝ Լուսինե Ստեփանյան

Ուսումնական հաստատություն ՝ Եղ. Չարենցի անվան թիվ 67 հիմնական դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Հետազոտության համատեքստ 4

Եզրակացություն.....14

Օգտագործած գրականության ցանկ.....15

Ներածություն

Թեման բավականին արդիական է, քանի որ երեխաների դաստիարակությունն ու ուսուցումը կարելի է հաջողությամբ կենսագործել միայն ընտանիքի և դպրոցի համատեղ ջանքերով: Ներկայումս դպրոցներում կարևոր հարցերից է նաև ուսուցիչ-աշակերտ-ծնող փոխհարաբերությունները և արդյունավետ համագործակցության կազմակերպումը:

Ուսուցչի ուսումնական և դաստիարակչական աշխատանքը կարող է հաջող ընթանալ այն դեպքում,երբ նա լավ ճանաչում է իր աշակերտներին,ուշադիր ուսումնասիրում է նրանցից յուրաքանչյուրին:

Ուսուցիչը պետք է տեղյակ լինի աշակերտի ընտանեկան հարաբերությունների, խնդիրների, ծնողների և մյուս երեխաների հետ առաջացած կոնֆլիկտների մասին: Երեխաների դաստիարակության որակի վրա բացասական ազդեցություն կարող է ունենալ ծնողների զբաղվածությունը, ընտանեկան անկայունությունը և այլ գործոններ:

Այս դեպքում երեխայի համար միակ աջակիցը մնում է ուսուցիչը, ով փորձում է աջակցել և օգնել երեխաներին և ստեղծել ծնող-ուսուցիչ փոխհարաբերություններ, որը կնպաստի երեխայի կրթության և ընտանեկան դաստիարակության զարգացմանը : Այս ամենը մանկավարժական գործընթաց է,որը հնարավոր կլինի իրականցնել երկու կողմերի համատեղ համագործակցության արդյունքում:

Բնականաբար ծնողի կամ օրինական ներկայացուցչի ներգրավվածությունը սեփական երեխայի կրթության գործընթացին տալիս է մի շարք դրական արդյունքներ: Ծնողի և ուսուցչի միջև ներդաշնակ համագործակցությամբ և համատեղ աշխատանքի կատարման շնորհիվ է հնարավոր հասնել երեխայի որպես անհատ կայացմանը,համակողմանի զարգացմանը,կրթության արդյունավետ կազմակերպմանը և դաստիարակությանը:

Ընտանիքի և դպրոցի համատեղ ջանքերով կլուծվի բազմակողմանի զարգացած, երջանիկ մարդու դաստիարակության ընդհանուր խնդիրները։ Ընտանիքը յուրահատուկ միջոցներով իրականացնում է հասարակության կողմից դրված նպատակը՝ դաստիարակել բազմակողմանի զարգացած անձնավորություն։ Բայց այս դժվար ու բարդ գործում ընտանիքի ու դպրոցի սերտ կապը միմյանց հետ մեր պայմաններում անհրաժեշտություն է։

Հետազոտության համատեքստ

Ոչ ոք չի կարող ժխտել այն հանգամանքը,որ հասարակության զարգացման ժամանակակից փուլում առավել քան կարևորվում է մանկավարժի դերը անձի զարգացման գործընթացում։

Մեծ է հանրակրթության մանկավարժների դերը,ովքեր մեծ ներազդեցություն ունեն աշակերտի անձի կայացման,մասնագիտական ընտրության, և, առհասարակ, աշակերտի՝ որպես հասարակության ապագա լիարժեք անդամի ձևավորման վրա։

Երեխայի անհատականության զարգացումը,նրա ունակությունների բացա-հայտումը,հնարավորությունների,հետաքրքրությունների պաշտպանությունը և այլ գործընթացներ,ինչպես ցույց է տալիս պրակտիկան,լավագույնը կատարվում է մանկավարժների կողմից։

Ծնողները,շատ հաճախ պատճառ բերելով իրենց զբաղվածությունն ու մասնագիտական գիտելիքների բացակայությունը, դպրոցի վրա են դնում երեխաների դաստիարակության բոլոր հոգսերը։ Երեխայի դաստիարակությունը յուրաքանչյուր ընտանիքի կարևորագույն պարտականությունն է։ Սակայն, ոչ բոլոր դեպքերում են ծնողները ճիշտ դաստիարակում իրենց երեխաներին։Նրանք դաստիարակության մասին սկսում են մտածել միայն այն դեպքում երբ երեխան սկսում է որևէ անկարգություն անել կամ թերություններ ունենալ։ Որպեսզի աշխատանքը լավ կազմակերպվի անհրաժեշտ է պարզել,թե որոնք են աշակերտների վարքի այն գլխավոր բացասական գծերը,որ դաստիարակչական շուտափույթ միջամտություն են պահանջում։

Ծնողների սերը միմյանց,երեխաների նկատմամբ,մտերմության,հարգանքի և վստահության հարաբերությունները ձևավորում են երեխայի զգացմունքները,նրա բարոյական որակները։ Ընտանիքում է ձևավորվում բնավորությունը։ Ծնողների վարքը ընտանեկան դաստիարակության մեջ վճռական նշանակություն ունի։

Այժմ յուրաքանչյուր ծնող պետք է գիտակցի,որ հարկավոր է իր սեփական գիտելրիքները անընդհատ լրացնել,որպեսզի բավարարի երեխայի հետաքրքրասիրությունը: Այսպիսով, ծնողները պետք է լավ հասկանան,որ դաստիարակությունը ընտանիքում հենվում է ծնողների ինքնա-դաստիարակության վրա: Միևնույն ժամանակ ծնողները պետք է գիտակցեն,որ երեխաների դաստիարակությունն ու ուսուցումը կարելի է հաջողությամբ կենսագործել միայն ընտանիքի և դպրոցի համատեղ ջանքերով:

Այս պարագայում էլ ավելի է կարևորվում ուսուցչի աշխատանքը և կապը աշակերտի ու ծնողի հետ,քանի որ անառողջ միջավայրը կարող է ազդել և՛ երեխայի կրթության և՛ դաստիարակության վրա: Այս դեպքում երեխաների համար ուսուցիչը դառնում է աջակից, ով փորձում է օգնել երեխաներին և ստեղծել ծնող-ուսուցիչ փոխհարաբերություններ,որը կնպաստի կրթության և ընտանեկան դաստիարակության զարգացմանը:

Ամեն իրավիճակում հնարավոր է ելք գտնել երեխայի հետ խոսելու, զրուցելու, ճիշտ ուղղու վրա դնելու համար: Անհրաժեշտ է ճանաչել երեխային,հասկանալ նրա հոգեվիճակը,նրան հուզող հարցերը: Անհրաժեշտ է ձեռք բերել նրա վստահությունը,ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ երեխան պետք է մտնի ուրախությամբ, ստանա նաև շատ հարցերի պատասխաններ:Ստեղծել այնպիսի մթնոլորտ , որ վերանա զգացմունքային լարվածությունը և վախի զգացողությունը:

Այս գործընթացում համագործակցության համատեղ արդյունքում ծնողը և ուսուցիչը կկարողանան զարգացնել սովորողի կարողությունները և հմտությունները,ինչպես նաև վարքը,օգնել երեխային հաղթահարել խնդիրները և կայացնել որոշումներ: Այդ ամենը իհարկե իրականացվում է մանկավարժական գործընթացի արդյունքում:

Մանկավարժական գործընթացն ուղղված է ապագա սերնդի կրթության ու դաստիարակության խնդիրների լուծմանը, աշակերտների ընդունակությունների և անձնային որակների բացահայտմանն ու ձևավորմանը:

Մանկավարժական գործընթացն ուսուցչի և աշակերտների իրար հաջորդող և փոփոխվող ,փոխկապակցված փոխազդեցություններ են՝ սովորողների ուսուցումն ու դաստիարակությունն իրագործելու,կրթության խնդիրները լուծելու,ամբողջ հասարակության յուրաքանչյուր մարդու զարգացումն ապահովելու համար: ՈՒսուցչի և աշակերտների միջև սերտ փոխհարաբերության պարտադիր պայմանը մանկավարժական տակտի առկայությունն է, որը մեծ մանկավարժ ՈՒշինսկին համարում է հոգեբանական տակտ: Ուսուցչի կապը աշակերտների հետ կարող է տարբեր լինել. մեկի հետ ըստ անհրաժեշտության ավելի շատ, ավելի մոտ կամ մի փոքր պակաս,բայց այդ հարաբերություններն ունեն շատ մեծ նշանակություն: ՈՒսուցիչ–աշակերտ հարաբերությունները երկկողմանի գործընթաց է, և այդ գործընթացի երկու կողմերն էլ փոխադարձաբար ներազդում, պայմանավորում ու ձևավորում են միմյանց :

Եթե փորձենք թվարկել մանկավարժի /դասղեկի/ գործառույթները

- դասարանում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպում,
- աշակերտների հետ արտադասարանական դաստիարակչական աշխատանքի կազմակերպում,
- աշխատանք մանկավարժահոգեբանական կարողությունների զարգացման ուղղությամբ և այլն

Մանկավարժի գործառույթների մեջ կարևոր տեղ է զբաղեցնում ծնողների հետ տարվող աշխատանքը:

<u>Ուսուցիչը՝</u>

· դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում, հայտնաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) և դրա մասին մեկօրյա ժամկետում տեղեկացնում է դպրոցի տնօրենին՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ.

• մասնակցում է իր ղեկավարած դասարանում սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը և մանկավարժահոգեբանական աջակցության համապատասխան ծառայությունների մշակմանը, դրանց ապահովմանը.

• նպաստում է սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժ ական պահանջների կատարման ապահովմանը.

Դասղեկ- ծնող համագործակցություն՝

• ծնողների հետ երեխաների դաստիարակության հարցերի քննարկում,

• դպրոցական կյանքին վերաբերող խնդիրների քննարկում,

•դաստիարակչական հարցերում որոշումների համատեղ կայացում,

•արտադասարանական աշխատանքներում ծնողների ներգրավվածության ապահովում

Ծնողական ժողովները ներգրավածության ապահովման լավ տարբերակ է։ Ժողովների ընթացքում մանկավարժը թեման ընտրելուց, կարևոր հարցերը առանձնացնելուց,յուրքանչյուր հարց քննարկելուց հետո ցանկալի է ներգրավի ծնողներին և լսի ծնողներոի առաջարկները։

Ուսուցիչ – ծնող համագործակցությունը կարող է զարգանալ, օրինակ,եթե փորձենք ավելի հաճախ և այլ ձևաչափերով կազմակերպել ծնողական ժողովները։Ներգրավենք ծնողներին երեխաների համար կազմակերպվող արտադասարանական աշխատանքների կազմակերպման և իրականացման գործընթացում։

Ուսուցման գործընթացում համագործակցության շնորհիվ ծնողը և ուսուցիչը պետք է աշակերտի մեջ զարգացնեն կարողություններ,հմտություններ,ձևավորեն արժեհամակարգ,ստեղծեն որպես քաղաքացի հիմնարար արժեքներ և վարք,օգնեն երեխաներին կոնֆլիկտներ և խնդիրներ լուծել,մասնագիտական ընտրություն

կատարել: Այդ ամենը իհարկե իրականացվում է ուսումնական առարկաների միջոցով և ծնող-ուսուցիչ համատեղ աշխատանքի միջոցով:

Եթե անդրադառնանք դասղեկի կողմից իրականացվող արտաժամյա դասընթացներին/դասղեկի ժամերին/, ապա այդ ժամերը կարող են անցկացվել զրույցների,բանավեճերի,էքսկուրսիաների,տարբեր զրույցների միջոցով: Կարելի է ծնողներին ակտիվ ներգրավվել այս գործընթացում:

Արտադասարանական հանդիպումները նպատակ ունեն

•Ուսումնական գործընթացի բարելավում

• Բարոյական արժեքների ձևավորում

• Համագործակցային հմտությունների ձևավորում

• Վարքի կուլտուրայի մշակում

• Ստեծագործական կարողությունների խթանում

•Անհատական կարողությունների բացահայտում

•Ինքնադրսևորման հնարավորությունների ամրապնդում

• Միջանձնային հարաբերությունների բարելավում

Ինչ պետք է անել

1) Ծնողներին իրենց երեխաների առաջընթացի մասին համապատասխան տեղեկատվություն ապահովել,ծնողների համար տեղեկատվություն հաղորդել դպրոցի միջոցառումների մասին:
2) Ծնողների հետ քննարկելուց և կարծիքները լսելուց հետո,կարող ենք առաջարկել աշակերտների համար տարբեր արտադասարամնական հանդիպումների թեմաներ,որոնց ընթացքում ծնողները կստանան համապատասխան տեղեկատվություն:

Քննարկել և հստակեցնել

1) Հանդիպման ժամանակցույցը - Նախքան երեխաների հետ դասընթացը սկսելը

Գործողություն – Տեղեկատվություն՝ ծրագրի,նախատեսված գործողությունների նպատակների և պարապմունքների ժամի, բովանդակության վերաբերյալ:

2) Հանդիպման ժամանակցույց – Ընթացքում կազմակերպել հանդիպումներ

Գործողություն –Քննարկումներ երեխաների բարեկեցության,նրանց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ,երեխաների կարիքների, խնդիրների, կոնֆլիկտների շուրջ,պարապմունքների արդյունքում երեխաների գրանցած ցուցանիշների,վարքի,տրամդրվածության և այլ թեմաների ու խնդիրների մասին:

Հանդիպումների ընթացքում անհրաժեշտ է ծնողներին ներկայացնել,թե ինչ է նախատեսված կատարել մինչև մյուս հանդիպումը: Անհրաժեշտ է լսել ծնողների կարծիքը,նոր թեմաներ ներդնելու մասին առաջարկները,ընտանիքում կամ երեխայի մոտ առկա խնդիրները: Քննարկումների արդյունքում որոշել առավել կարևոր խնդիրներ,որոնք վերաբերում են տվյալ դասարանի աշակերտներին, և դրա քննարկման հիման վրա ձևավորել զրույցը ծնողների հետ :

Հանդիպումների ընթացքում ծնողներին պետք է ներկայացվի և շարունակաբար տեղեկացվի,թե ինչ է կատարվում երեխաների հետ անցկացվող պարապմունքների ժամանակ և ինչպիսի առաջընթաց ունեն նրանք:

Օրինակ՝ երեխաների հետ մասնագիտական կողմնորոշման կարևորության և ընտրությանն օգնող քննարկումներ իրականացնել,որի հետագա արդյունքների մասին ծնողները կտեղեկանան, բարձրացնել իրազեկվածությունն ու ավելացնել գիտելիքներ այն մասին,թե ինչ է անհրաժեշտ երեխաներին սոցիալապես,հոգեպես և ֆիզիկապես առողջ մեծանալու և զարգանալու համար,որոշել այն խնդիրները,որոնց հանդիպում են երեխաները իրենց դպրոցում,համայնքում: Ցույց տալ ծնողներին,թե ինչպես կարող են բազմաթիվ խնդիրները վհատեցնել երեխային և խանգարել նրա դրական և առողջ զարգացմանը: Օգնել հանդիպման մասնակիցներին հասկանալու երեխաների արձագանքները խնդիրներին և քննարկում այն մասին,թե որն է օգնություն տրամադրելու լավագույն եղանակը:

Երբ երեխաների բեռը չափազանց ծանր է դառնում, և նրանց կյանքը լցվում է միանգամից չափազանց շատ խնդիրներով,նրանց համար դժվար է դառնում շարունակել առաջ գնալը և ուժեղ ու առողջ մեծանալը։Այդպիսի պահերին կողմնակի օգնություն է հարկավոր,որպեսզի կարողանան նորից մտնել դրական զարգացման ուղին։

Երբ երեխաները խնդիրներ ունեն,հաճախ արձագանքում են՝ դրսևորելով այնպիսի վարք,որը կարող է մտահոգել շրջապատի մարդկանց։ Մենք պետք է կարողանանք ճանաչել այն երեխաներին,որոնք պայքարում են խնդիրների դեմ,հասկանալ նրանց արձագանքները և տրամադրել անհրաժեշտ աջակցությունը։

Խնդիրներ ունեցող երեխաները տարբեր կերպ են արձագանքում իրավիճակներին՝կախված իրենց բնավորությունից և ներքին ուժից,ինչպես նաև իրենց միջավայրից։ Նրանք նաև սովորում են թե ինչպես արձագանքել տարբեր իրավիճակների՝ հետևելով իրենց հասակակիցներին,ծնողներին, խնամակալներին և ուսուցիչներին։ Օրինակ, եթե երեխայի խնամակալները շատ վախվորած և անհանգիստ են, սա, ամենայն հավանականությամբ,երեխային նույնպես կդրդի լինել անհանգիստ։ Նմանապես,երբ երեխայի հասակակիցները և ընտանիքը հանգիստ են,ապահով և երջանիկ,երեխան նույնպես երջանիկ կլինի։

Կարևոր է հասկանալ,որ երեխաները չափահասների նման արձագանքում են իրենց միջավայրին։ Սա նշանակում է, որ եթե երեխան խնդրահարույց վարքագիծ է դրսևորում,պատժելու փոխարեն կարևոր է, որ ծնողներն ու խնամակալներն ուսուցչի հետ միասին ուսումնասիրեն այն խնդիրները որոնց նա բախվում է։ Փորձեն հասկանալ նրա արձագանքը,զգացմունքները և փորձեն աջակցել երեխային,որ ուժեղ լինի և հաղթահարի այն մարտահրավերները որոնց առջև կանգնած է։

Հանդիպումների ժամանակ կարելի է խմբերի բաժանել ծնողներին,ովքեր կընտրեն երեխաների մոտ հանդիպող խնդիրներից մեկը։ Խմբերին ժամանակ տալ քննարկելու՝ ինչպես կարող ենք նրանք որպես ծնողներ և խնամակալներ, լավագույն աջակցությունը ցույց տալ այս խնդիրներն ունեցող երեխաներին։

Մենք հիմնականում կարող ենք վարքի միջոցով ճանաչել խնդիրներ ունեցող երեխաներին։ Երեխայի վարքի պատճառներն ուսումնասիրելով և փորձելով հասկանալ նրանց զգացմունքներն ու արձագանքներն ՝ արդեն կկանգնենք երեխային օգնելու ճանապարհին։ Երեխաների մեծ մասին հնարավոր է օգնել հաղթահարելու մարտահրավերները ծնողների և խնամակալների օգնությամբ։ Ծնողների մոտ պետք է ընդգծել նաև,որ վատ վարք դրսևորող երեխաները դա չեն անում այն պատճառով,որ վատ մարդիկ են,նրանք այդպես ցույց են տալիս,որ խնդիրներ ունեն, և նրանց օգնություն է պետք։ Հանդիպումների ժամանակ կարևոր է հասկանալ,որ երեխաները կարող են խնդիրների առաջ կանգնած լինել։ Պետք է պարզել դրանք և թե ինչպես են արձագանքում խնդիրներին, թե ինչ եղանակներով կարող ենք օգնել երեխաներին լինել ուժեղ և հաղթահարել մարտահրավերները։ Մենք կարող ենք մեծացնել երեխայի ՝ խնդիրները հաղթահարելու հնարավորությունը։ Մենք կարող ենք օգնել երեխաներին լինելու ուժեղ,երբ նրանք կանգնած են խնդիրների առջև,կամ ավելին՝ ուժեղացնել նրանց մինչև խնդիրների ծագելը։

Մեկ այլ օրինակ ծնողի և ուսուցչի համագործակցության կարող է լինել երեխայի կողմից կարևորագույն որոշումներից մեկի կատարման ՝ մասնագիտության ընտրության հարցում ։

Մանկավարժը կարող է ուսումնասիրել. թե երեխաների մասնագիտության ընտրության հարցում ովքեր են հիմնական ազդեցությունն ունենում և հատկապես ինչ դեր ունեն այդ գործում նրանց ծնողներն ու իրենք ՝ մանկավարժները։ Մանկավարժը կարող է խորհրդատվության,դերային խաղերի միջոցով աշակերտների համար բացահայտել ծնողների,մանկավարժների կարծիքի և երեխաների ցանկությունների միջև առաջացող հակասությունների, կոնֆլիկտների,լարվածության հաղթահարման կառուցողական և նպատակահարմար ուղիներ։

Մասնագիտական կողմնորոշման գործընթացում մեր հասարակության մեջ շարունակում է ամենամեծ ազդեցությունն ունենալ ընտանիքը,մասնավորապես ՝

ծնողները։ Ընտանիքն է երեխայի մեջ հիմք դնում այն հիմնարար արժեքներին,որոնցով էլ հետագայում պայմանավորվում է անձի վարքը, դիրքորոշումները հասարակական հարաբերություններում։ Վերջիններս էլ անմիջականորեն ազդում են անձի մասնագիտական կողմնորոշման և կարիերայի պլանավորման գործընթացի վրա։ Իհարկե,այստեղ պետք է նշել,որ ծնողներից բացի կարևոր ազդեցություն այդ գործընթացներում ունենում են մանկավարժները,ովքեր շատ դեպքերում աշակերտների համար դառնում են նմանակման և ընդօրինակման օբյեկտներ։

Ընտանիքն ունի կարևորագույն նշանակություն երեխայի մասնագիտության ձեռքբերման հարցում. ապագա մասնագիտության ոլորտների քննարկում,անհրաժեշտ հմտություններ,աջակցություն մասնագիտական աճի ճանապարհին,այդ իսկ պատճառով ծնողների կողմից թույլ տված սխալները իրենց երեխայի մասնագիտական կայացման ճանապարհին կարող են բացասաբար ազդել նրանց հետագա ընտրության վրա։ Նման պատահական սկզբունքով մասնագիտություն ընտրելուց խուսափելու համար անհրաժեշտություն է,որ ուսուցիչը, ով ցանկանում է մասնագիտական կողմնորոշման խորհրդատվությանը նվիրված հանդիպումներ իրականացնել աշխատանք կատարի ոչ միայն երեխաների այլև նրա ընտանիքի հետ։

Մանկավարժը,հաշվի առնելով երեխաների հետաքրքրությունները,հակումները և պահանջմունքները,կարող է ապահովել այնպիսի պայմաններ,որոնցում նրանք կկարողանան ստեղծել իրենց մասնագիտական հետաքրքրություններին ու նախասիրություններին համապատասխան միջավայր։Մանկավարժը կարող է ոչ միայն ազդել դեռահասի մասնագիտական ընտրության վրա,այլև առաջացնել հետաքրքրություն՝ մոտիվացիա այս կամ այն ոլորտի նկատմամբ,ինչպես նաև սեփական մասնագիտական հավակնությունները ճիշտ գնահատելու համար։

Հետազոտությունների համաձայն, աշակերտները որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում: Եթե ծնողները կապված չեն ուսուցիչների հետ կամ հետաքրքրված չեն դպրոցի

առօրյա կյանքով, այդ երեխաների ակադեմիական առաջադիմությունը մյուս երեխաների համեմատությամբ ավելի ցածր է։ Աշակերտներն ավելի դրական են տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի ու հնարավորությունների նկատմամբ ավելի շատ վստահություն ունեն և ավելի լավ վարք ունեն։ Դպրոցի կյանքին մասնակից ծնողների երեխաները ավելի լավ հարաբերություններ ունեն ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի անդամների հետ ։ Ըստ Կոտարբինսկի լավ ուսուցիչը կարող է ուրիշներին սովորեցնել այն,ինչ ինքը չի կարող անել։ Միգուցե միշտ չէ որ ուսուցչի աշխատանքի արդյունքները անմիջապես շոշափելի են լինում,բայց ուսուցիչն է կերտում ապագան։Մեր վերը քննարկված համագործակցության արդյունքները նպատակաուղղված աշխատանքի արդյունքում դրական դրսևորում կարող են ունենալ թե ընթացիկ թե հետագա ժամանակահատվածում։ Միայն անհատականությունն է ունակ դաստիարակել անհատականություն ։ Հետևաբար ուսուցիչը պետք է գիտակցի իր սոցիալական բարձր պատասխանատվությունը, ճանաչողական գործունեությունը, կատարի ինքնակատարելագործման համակարգված աշխատանք։ Մանկավարժական գործընթացում հանդիպող շատ իրավիճակներ վերածվում են մանկավարժական խնդիրների՝ մանկավարժներին, աշակերտներին ու նրանց ծնողներին դրդելով իրավիճակների վերլուծությանը, առաջարկվող լուծումների, տարբերակների գնահատմանը,լավագույն տարբերակի ընտրությանը և իրականացման պլանի մշակմանը։ Շատ կարևոր է,որ դասավանդող ուսուցիչները ուշադրություն դարձնեն ցանկացած մանկավարժական իրավիճակին, ճիշտ մոտեցում ցուցաբերեն և խնդրահարույց իրավիճակին համապատասխան լուծում տան՝ ելնելով մանկավարժական գործընթացի նպատակից, մանկավարժական իրավիճակի բնույթից, աշակերտների տարիքային առանձնահատկություններից և այլն ։

Եզրակացություն

Այսպիսով հետազոտությունները ցույց են տվել, որ ուսուցչի համագործակցումը սովորողի ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ ՝ կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում, ունենում է դրական ազդեցություն աշակերտի կրթության,վարքի անձնական որակների հարցերում։

Արդյունավետ աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ է ապահովել արդյունավետ հաղորդակցում և տեղեկատվության փոխանակում ծնողների և ուսուցիչների միջև։

ՈՒսուցիչ-ծնող կապը աշակերտի ուսումնադաստիարակչական գործընթացի նպատակային և բարեհաջող կազմակերպչական կարևորագույն հարցերից է,այսպիսով առաջարկվում է ստեղծել նոր համագործակցության հնարավորություններ։

Այսպիսով համագործակցության հնարավորությունները ընդլայնելու և ծնողների ներգրավածությունը ավելացնելու նպատակով **առաջարկվում է** ավելի հաճախ և այլ ձևաչափով անցկացնել ծնողական ժողովներ և ներգրավել ծնողներին արտադասարանական արտաժամյա հանդիպումների աշխատանքներում։

Երեխաները մեր ապագան են, համատեղ գործունեության արդյունքում մենք կունենանք լավ ապագա և կունենանք դրական ազդեցություն երեխայի ուսումնադաստիրակչական հարցերում։

Օգտագործված գրականության ցանկ

1) Յու. Ամիրջանյան, Ա.Ա. Սահակյան «Մանկավարժ» ձեռնարկ, 2005թ.
2) Գ. Ն. Հարությունյան «Մանկավարժական խնդիրները և դրանց լուծման ուղղիները տարրական դպրոցում»
3) ՄԱԿԻ Երեխաների իրավունքների մասին իրավունքների կոնվենցիայ
4) Ա. Պետրոսյան «Դասղեկական աշխատանքի կազմակերպումը դպրոցում»
5) Ս. Սեդրակյան «Ընտանիքի հոգեբանություն» Երևան 2010
6) Մեթոդական ձեռնարկ ինչից սկսել – ՀԿԽԸ 2020
7) Ուսումնամեթոդական ձեռնարկ հանրակրթական դպրոցներում մասնագիտա-կան կողմնորոշման ծառայություններ իրականացնող մասնագետների համար